



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 109-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետում «շահաբաժինների» բառից առաջ լրացնել «ոչ ռեզիդենտ կազմակերպությունների ստացած» բառերը:

Հոդված 2. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 3. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 150-րդ հոդվածի 8-րդ մասի «իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ստացած շահաբաժինների մասով եկամտային հարկը հաշվարկվում է հինգ տոկոս դրույքաչափով» բառերը հանել:

Հոդված 4. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 159-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 5. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 444-րդ հոդվածի 7-րդ մասի «իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ստացած շահաբաժինների՝ եկամտային հարկով հարկմանը վերաբերող դրույթը տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածներին վերագրվող (այդ ժամանակահատվածների գործունեության արդյունքում ստացվող) շահույթներից՝ որպես շահույթի բաշխում, մասնակցի ստացած շահաբաժինների վրա» բառերը հանել:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:»:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Սույն օրենքի նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 01.06.2018թ. թիվ 581 որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագիրը (այսուհետ՝ **նաև Ծրագիր**), որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 07.06.2018թ.:



**Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության
հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին**

Մասնավորապես, Ծրագրի 6.2 ենթակետից հետևում է Կառավարության հանձնառությունը ՀՀ տնտեսական գրավչությունը մեծացնելու և ներդրումային միջավայրը բարելավելու նպատակով ձևավորել հնարավորին կայուն և կանխատեսելի հարկային միջավայր և շարունակաբար բարելավել գործարար միջավայրը: Ըստ էության, Ծրագրի նշված դրույթի հիմնական նպատակներից է տնտեսվարող սուբյեկտների հարկային պարտավորությունների ողջամիտ բեռնաթափումը և այդպիսով տնտեսության աշխուժացումը:

ՀՀ կառավարության նոր առաջնահերթությունների լույսի ներքո անհրաժեշտ է վերանայել ՀՀ հարկային օրենսգրքի մի շարք կարգավորումներ՝ ապահովելով տնտեսվարող սուբյեկտների հարկային պարտավորությունների խելամիտ բեռնաթափումը և վերաբաշխումը:

Սույն համատեքստում առաջարկվում է վերացնել շահաբաժինների հարկման կառուցակարգը և վերադառնալ նախքան 04.10.2016 թվականի ՀՀ հարկային օրենսգրքի ընդունումն առկա կարգավորումներին, երբ իրավաբանական անձի գործունեության արդյունքում ձևավորված շահույթից մասնակիցների (բաժնետերերի, փայատերերի) ստացած շահաբաժինները չէին հարկվում:

Գործող իրավակարգավորումը խնդրահարույց է թե՛ իրավական և թե՛ տնտեսական առումներով: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածի համաձայն՝ *Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:*

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ փրկապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:*

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:*

Նույն հոդվածի 8-րդ մասին համապատասխան՝ *յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:*

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ *հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին*



**Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության
հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին**

հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ իրավասու է անարգել օգտվելու իր գույքից: Ոչ ոքի չի կարելի զրկել նրա գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ փուլանքների վճարումն ապահովելու համար»

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային վճիռներում բազմիցս արձանագրել է, որ «Բավարար չէ, որպեսզի սեփականության իրավունքից զրկման եղանակը հետապնդի «հանրության շահի» իրավաչափ նպատակը, նաև պետք է գոյություն ունենա **համաչափության ողջամիտ հարաբերակցություն կիրառված միջոցների և դրված նպատակների միջև**»:¹

Եվրոպական դատարանը *Sporrong and Lönnroth v. Sweden* (1982) գործով ² արձանագրել է, որ համաչափության սկզբունքը բնորոշ է ողջ Կոնվենցիային և արտացոլված է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կառուցվածքում Նշվածից հետևում է, որ անձի սեփականության նկատմամբ կատարված ցանկացած միջամտություն պետք է լինի համաչափ:

ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հարկը պետական և (կամ) հասարակական կարիքների բավարարման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ վճարվող պարտադիր և անհատույց գումար է, որը վճարվում է հարկ վճարողների կողմից՝ Օրենսգրքով սահմանված կարգով, չափերով և ժամկետներում:

Այսպիսով, վերոնշյալ իրավական ակտերի կարգավորումների համադրումից հետևում է, որ հարկն իրենից ներկայացնում է դրամական միջոցների նկատմամբ անձի սեփականության իրավունքի սահմանափակում, որը սահմանվում է օրենքով՝ Հարկային օրենսգրքով և որի նպատակը հանրության շահերի, այն է՝ հասարակության և պետության կարիքների բավարարումն է: Վերջիններս փաստորեն կարող են բավարարվել հասարակության անդամներին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցների՝ Հարկային

¹ James v. The United Kingdom, 22/02/1986թ. վճիռ, գանգատ թիվ 8793/79, կետ 50):

² Sporrong and Lönnroth v. Sweden, 23/09/1982թ. վճիռ, գանգատ թիվ 7151/75; 7152/75, կետ 69:



**Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության
հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին**

օրենսգրքով սահմանված չափով հոգուտ պետության մասհանումներ կատարելու միջոցով:

Միևնույն ժամանակ, քանի որ առկա է անձի հիմնական իրավունք հանդիսացող սեփականության իրավունքի սահմանափակում, վերջինս պետք է բավարարի ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածով, ինչպես նաև ՄԻԵԿ 1-ին արձանագրության 1-ին հոդվածով սահմանված համաչափության սկզբունքի պահանջներին:

Շահաբաժինները կամ դիվիդենդները հարկվում են կա՛մ եկամտահարկով, կա՛մ շահութահարկով՝ կախված նրանից, թե ով է շահաբաժին վճարող իրավաբանական անձի մասնակիցը՝ ֆիզիկական անձ, թե՛ իրավաբանական անձ: Շահաբաժինները վճարվում են իրավաբանական անձի շահույթից, որն արդեն իսկ Հարկային օրենսգրքի իմաստով հանդիսանում է հարկման բազա (հոդված 105): Վերջինս ձևավորվում է հարկատու իրավաբանական անձի ձեռնարկատիրական գործունեությունից, որը, Հարկային օրենսգրքի 107-րդ հոդվածի համաձայն, հանդիսանում է հարկվող եկամտի աղբյուր: Ակնհայտ է, որ իրավաբանական անձը. քաղաքացիական շրջանառությունում գործելով իր մասնակիցներից իրավական ինքնավարության պայմաններում, այդուհանդերձ, նախ և առաջ, ծառայում է նրանց տնտեսական շահերին, այլ կերպ ասած՝ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունքում գոյացած շահույթը, վերջին հաշվով, պատկանում է այդ կազմակերպությունների սեփականատերերին: Հաշվի առնելով սույն իրողությունը՝ մասնավորապես, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կորպորատիվ հարաբերություններում իրավաբանական անձը բնորոշվում է որպես կեղծ կամ արհեստական անձ (fictitious person)՝ նկատի ունենալով, որ այն հանդիսանում է քաղաքացիական շրջանառության մեջ իր մասնակիցների տնտեսական շահերի սպասարկման իրավական միջոց:

Սրանից հետևում է, որ իրավաբանական անձի շահույթից գանձվող շահութահարկը և նրա մասնակիցների շահաբաժնից գանձվող եկամտային հարկը կամ շահութահարկը գանձվում են միևնույն աղբյուրից, միևնույն տնտեսական գործունեությունից, որը փաստացի իրականացվում է միևնույն անձի՝ իրավաբանական անձի մասնակցի կամ մասնակիցների կողմից: Ստացվում է, որ նույն անձը միևնույն գործունեության համար հարկ վճարելու իր սահմանադրական պարտականությունը կատարում է կրկնակի անգամ, ինչն իրավական տեսանկյունից մտահոգիչ է և չի կարող համարվել պետության կողմից սեփականության իրավունքի սահմանափակման պիտանի և անհրաժեշտ միջոց:

Այնպիսի երկրներում, ինչպիսիք են, Ավստրալիան, Ֆինլանդիան, Նորվեգիան, Ճապոնիան, Բրազիլիան, Իրանը, Վրաստանը, Սլովակիան և այլք, շահաբաժինները չեն հարկվում: Նշված երկրների մեծ մասը համարվում են զարգացած կամ արագորեն զարգացող տնտեսություններ ունեցող:



**Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության
հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին**

Գտնում ենք, որ միևնույն գործունեության կրկնակի հարկումը՝ իրավաբանական անձից շահութահարկ, իսկ նրա մասնակիցների ստացած շահաբաժիններից՝ եկամտային հարկ կամ շահութահարկ, անձի սեփականության իրավունքի հակասահմանադրական սահմանափակում է և չի կարող պիտանի և անհրաժեշտ լինել պետության և հասարակության կարիքների բավարարման հանրային շահի իրացման նպատակի համատեքստում, քանի որ դրանով անհամաչափ վնաս է հասցվում այլ շահերի՝ տնտեսական գործունեության ազատությանը, ընդհանուր տնտեսական բարեկեցությանն ու սոցիալական արդարությանը, ինչը ենթադրում է նյութական բարիքների բաշխման և վերաբաշխման այնպիսի կառուցակարգերի ներդնում, որը մի կողմից կապահովի պետության առջև դրված նպատակների պատշաճ իրականացման համար անհրաժեշտ նյութական ռեսուրսների հավաքագրում, իսկ մյուս կողմից թույլ կտա հասարակության անդամներին տնտեսական գործունեության միջոցով բարձրացնել սեփական բարեկեցության մակարդակը:

Ինչ վերաբերում է շահաբաժինների հարկման տնտեսական խնդիրներին, ապա հարկ է նշել, որ շահաբաժինների հարկումը բացասաբար է ազդում տնտեսական աճի տեմպերի վրա, իջեցնում է տնտեսավարման մոտիվացիան և արդյունքում խաթարում է միկրոտնտեսական կայունությունն այն իմաստով, որ, չնայած պետության ֆիսկալ գործունեության ցուցանիշները լինում են գոհացուցիչ, սակայն բնակչության կենսամակարդակն ու տնտեսական աշխուժությունը վատթարանում է: Երկարատև կտրվածքով դա ազդում է նաև պետության մակրոտնտեսական ցուցանիշների վրա, քանի որ տնտեսական ակտիվության անկումը հանգեցնում է նաև հարկման առարկայի և բազայի աստիճանական փոքրացմանը: Օրինաչափ է դառնում նաև կապիտալի արտահոսքը, հատկապես եթե հաշվի առնենք, որ հարևան Վրաստանում և Իրանում հարկային դաշտն ավելի բարենպաստ է և բիզնեսի համար նվազ ծախսատար: Պետությունը բացասաբար է ընկալվում նաև ներդրումային գրավչության տեսանկյունից, իսկ վերջին հանգամանքը օտարերկրյա ներդրումների մեծ կարիք ունեցող Հայաստանի համար կարող է խիստ վնասաբեր լինել:

Շահաբաժինների հարկումը Հայաստանում բացասաբար է ազդում հատկապես փոքր և միջին ձեռներեցության շահութաբերության վրա: Առանց այն էլ սահմանափակ շրջանառությամբ տնտեսվարողների փոքրածավալ շահույթն էլ ավելի է սահմանափակվում: Որպես օրինակ՝ կարելի է բերել փաստաբաններին, ատամնաբույժներին և զգալի չափով ինքնազբաղվածության ձևով աշխատող այլ մասնագետների:

Նման տնտեսական քաղաքականությունը նեգատիվ է ազդում տնտեսական գործունեության թափանցիկության վրա և տնտեսավարողներին մղում է սովորաբար դաշտ:

Գտնում ենք, որ Ծրագրում հռչակված տնտեսության ազատականացման, տնտեսական աճի խթանման, եկամտի և կապիտալի հարկման



**Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության
հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին**

սահմանափակման նպատակադրումների շրջանակում շահաբաժինների հարկման վերացումը Հարկային օրենսգրքում առաջարկվող փոփոխությունների կատարմամբ կլինի հիմնավորված թե՛ իրավական և թե՛ տնտեսական առումներով:

ՏԵՂԵԿԱՆՔ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ,
ԳՈՐԾՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ նոր իրավական ակտերի ընդունման, գործող իրավական ակտերում փոփոխություններ կամ փոփոխություններն էր կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՏԵՂԵԿԱՆՔ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՐՃԱՏՄԱՆ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ նախատեսվում է Հայաստանի Հանրապետության եկամուտների կրճատում, սակայն ծախսերի ավելացում չի նախատեսվում: